Դանիել Վարուժան

Մուսային

Թե ջրլապինդ մրշակն ի՛նչպես կը փարի
Իր կոր մաճին, կը պատռե լանջն հողերուն:
Եվ սահանքին տակ արփական շողերուն
Ի՛նչպես կ'ըլլան լերկ ակոսները՝ բերրի:

Թե շիկագույն ցորյանն ի՛նչպես կալին մեջ
Կը բրրգանա, և աղորիք կը մռընչեն.
Ի՛նչպես կ'հորդի քաղցած խրմորը տաշտեն,
Ջոր հուսկ կ'եփեն գեղջուկ փուռին մեջ անշեջ:

Թե կը սրփռե Հա՛ցը, Հա՛ցը սրբազան
Ի՛նչ բերկրանքներ, արարչական ի՛նչ կորով,
Սորվեցո՛ւր ինձ, ո՛վ հայրենի իմ Մուսան:

Սորվեցուր ինձ. պսակե քընարս հասկերով,
Ջի կալին մեջ, զով շուքին տակ ուռիին
Ահա կը նստիմ, ու նրվագներս կը ծրնի՛ն: